

դոցա հիմքերը։ Մանկավարժները մատնանիշ են անում այն, որ դաստիարակութեան առարկայ հանդիսանում է անհատը. այն, պատասխանում է Բերդեմանը, բայց իրական անհատը և ոչ թէ երես կայականը. իսկ այդ լրական անհատը ապրում է հասարակութեան մէջ, նորանից դուրս չի կարող ապրել, բացի գորանից ամեն կողմից էլ թէ խելքի, թէ կամքի և թէ զգացողութեան կողմից մարդը հանդիսանում է շրջապատող հասարակութեան թէ մարմնից և թէ ուլլից, անհատը անբաժան մասն է հասարակութեան օրդանիզմի, որը իւր գոյութեամբ կարող է միայն ապրել այդ օրդանիզմի գրք կում, նորա համար և նորա կեանքով։ Միթէ մանկավարժները պիտի հերքեն այս փաստը, և որովհետև սա անհերքելի է, ուստի պէտք է դաստիարակել անհատին համախմբեալ ամբողջութեան համար – հասարակութեան և մարդկութեան համար և ոչ թէ իւր անձի համար։ Մանկավարժները խօսում են անհատի բարոյական արժանիքի մասին, բայց չէ որ այդ արժանաւորութիւնը չափում է ոչ թէ նորանով, թէ ինչ է արել մարդը իւր անձնական բարիքի համար, այլ նորանով թէ ինչ է կատարել նա հայրենիքի և մարդկութեան համար։

Ա., Շահ.

(Կը շարունակուի)։

## ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

### ԿՐՈՆՆԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

#### I

Ճապոնացիներն իրենց ծագումն առնում են մոնղութական ցեղերից, որոնք կորեայից ճապոնիա խուժեցին. Նրանցից մէկը բնակութիւն հասաստեց Կիուշու կղզու վրա՝ մօտաւորագես Ա-րդ դարում Ք. ա., իսկ միւսն արդէն մի քանի դար նրանից առաջ հասաստուել էր իզումոյում։ Առաջին ցեղն ընկձեց երկրորդին ձռւեց, նրան և

Երկրի տիրապետութիւնն իր ձեռքն առաւ։ Երկրի նախնական, բուն բնակիչները, Այնու կոչուած, քշուեցին գեղի երկրի հիւսիսային կրղմերը, որոնք և իրենց վերջին փախստավայրում, Ասսօ կզզու վրայ, արմատախիլ լինելու վրայ են ներկայում։

Երկրի նոր տէրերը, մանգոլական ցեղի շառաւիզներ, իրենց բնութեամբ, աշխարհակացողութեամբ և նիստուկացով միանգամայն վայրենի էին և զուրկ կուլտուրայից։ Ճաղեան պարտական է իր նախնի հոգեկան բարոյական և կրօնական կուլտուրան զրացի և ցեղակից չինաց ժողովրդին։ Չինական կուլտուրական ազգեցութիւնը ճապոնիայում սկըսւում է Յայուն գլխաւորապէս երկու ճանապարհով՝ կողմից բուդդայականութեան և միւս կողմից Կոնֆուցիոսի վարդապետութեան ազգեցութեան տակ։ Վերջին երեք տասնեակ տարուայ ընթացքում ճապոնիայում կատարուած կուլտուրական յեղաշրջումի մասին՝ արեմտեան ազգեցութեան տակ՝ լուսում ենք այստեղ առ այժմ։

Երկրի տեղական կրօնը կոչւում է չինական բառով Շինտո։ Բայի այ, կրօններից ճապոնիայում գոյութիւն ունի նաև մի ուրիշ կրօն՝ Տենրիիկ կոչուած։ Իր ծագումով ճապոնական և աննանորագոյնը միւս կրօնների թւում։ Սրանց պիտի կցել նաև քրիստոնեական կրօնը, որն ևս իր պատմական անցեալն ունի ճապոնիայում։ Այսպիսով ուրեմն ճապոնիայում կողք՝ կողքի գոյութիւն պահպանող յիշած հինգ կրօններից երկուսը՝ Շինտո և Տենրիիկուրենց ծագումով ճապոնական են, երկուսը՝ բուդդայականութիւն և Կոնֆուցիոսի ուսումը՝ Չինաստանից են մուտք գործել ճապոնիա։ Խոկ քրիստոնեութիւնը քարոզուել է ճապոնիայում նախ արեմտեան Եւրոպայից զնացած միօննարների ձեռքով։ Յիշած հինգ կրօններից միայն երեքը, Շինտո՝ բուդդայականութիւնը և կոնֆուցիոսի վարդապետութիւնը խաղացել են կարեւոր և առաջնակարգ դեր ճապոնիայի կրօնական՝ կուլտուրական կեանքում։ Աւելի քան հաղար տարի պահել են այդ երեք կրօնները միաժամանակ իրենց գոյու-

թիւնը ձագոնիայում, մեկը միւսի վլայ, ի հարկէ, մեծ  
կամ փոքր չափով աղջեցութիւն դործելով, շատ յաճախ  
նաև իրար ձուլուելով։ Ճագոնիայի ժողովրդական կրօնը  
եղել է և է իսկապէս մի խառնուրդ յիշած երեք կրօնների։  
Այդ ժողովրդական կրօնի զիցարանութիւնը հիմնուած է  
Եբնոտ կրօնի, նրա փրկարդործական ուսումը՝ բուդդայակա-  
նութեան, իսկ բարոյագիտութիւնը՝ Կոնֆուցիոսի վարդա-  
պետութեան վրայ։

Ժողովրդի, ամբոխի զիտակցութեան և հասկացողու-  
թեան մեջ այդ երեք տարրեր կիօնները միացել են և կազ-  
մում են մի միութիւն։ Սակաւ անհատներ միայն զիտակ-  
ցարար համարւում են սոսկ շինուօխա, բուդդայական կամ  
Կոնֆուցիոսի հետեւող։ Խնդիրն այլ է, ի հարկէ, երբ մենք  
Ճագոնիայի կարեւորագոյն կրօնների ծագումը, պատմու-  
թիւնը և նրանց վարդապետութիւնն ենք հետաքրքրութեան  
առարկայ գարձնում։ Այս անսակէտից էլ զրում ենք մենք  
հետեւեալ տողերը, նկարագրելով Ճագոնիայում իշխող կրօն-  
ներից իւրաքանչիւրի էական բնոյթը։

Ճագոնիայի նախնական բուն ազգային կրօնն է Շինտոն,  
որի նշանակութիւնն է «Ճանակարհ զից»։ Եբնոտ կրօնի  
զիցարանութեան համար կարեւորագոյն աղբիւրն է Կոյիկի  
կամ «տեղեկութիւններ շին պատմութիւններից»։ Այդ  
զիրքը պարունակում է հատընտիր լեզենդներ, ժողոված  
և զրի առնուած 712 թ. Ք. յ. Բուտ այդ զիցարանութեան  
սկզբում գոյութիւն ունեին երկնքն ու երկերը, աղաստացան  
իրենց գոյութիւնը նախ միայն երեք աստուածութիւն, յե-  
տոյ երկու, ապա կրկին երկու և վերջը հինգ զոյգ աս-  
տուածութիւններ։ Այս աստուածութիւնների անունները  
ցոյց են տալիս, որ զրանք, Շինտոյի աստուածութիւնները,  
վերացական գաղափարների, բայց և բնութեան զանազան  
երեսյթների անձնաւորացում (Personification) են։ Շինտոյի  
էութիւնն է բնութեան և նախնիքների պաշտամունքը։

Այդ կրօնն ունի արեգակի, լուսնի, հողմի, ծովի,  
կրտկի և այլ բազմաթիւ աստուածութիւններ, այսպէս օրի-  
նակ նոյեմբեր ամսին տօնում են բոլոր ընտանիքներում

Հետաւի նո կամի, օջախի աստուածուհու աօնը։ Այդ բոլոր աստուածութիւնների մէջ գերազոյն տեղը բռնում է արեգակի աստուածութիւնը, իսկ նրա կողքին՝ լուսնի աստուածութիւնը։ Արեգակի աստուածուհին է նաև նախամայրը իշխաղ կայսերական տան՝ Միկադօյի։ Միկադօ կայսրներն իրենք ևս պաշտամունքի առարկայ են՝ իրրե աստուածութիւն։ Կայսերական տան աստուածային ծագումը և նրան պաշտելու պարտաւորութիւնը՝ — ահա Նինտօյի կարելի է տոհլ միակ և մնացած բոլորն իր մէջ պարունակ կող վարդապետութիւնը։ «Հետեւիր քո բնական զրդիչներին և պահիր Միկադօյի պատուերները» — ահա Նինտօ կը օնի պատուերների գումարը։

Դից և Միկադօյի պաշտամունքից զատ կարեոր տեղ է բռնում այդ կը օնի մէջ նաև «նախնեաց պաշտամունքը», որը կատարելու պարտաւորութիւն ունին թէ՝ զատ զատ ընդունանքներ և թէ հասարակութիւնը, ամբողջ ազգութիւնը։ Նախնեաց պաշտամունքն արդէն ցոյց է, տալիս, որ շինտօնիւտներն ընդունում են կեանքի յարատեռութիւն այս երկրային կեանքից յետոյ։ իսկ այդ յարատեղ կեանքի «որտեղ» և «ինչու» լինելու մասին նրանք որոշ, պարզ հասկացողութիւն չունին։ Մեռած նախնիքների գերեզմանները պարբերաբ յաճախորդներ են գնում և այնտեղ իրենց զոհը մատուցանում։ Այս ընդհանուր նախնեաց պաշտամունքի հետ գոյութիւն ունի նաև յատկապէս «հերոսների պաշտամունքը»։ Այսպէս մէկը պաշտում է իրը բժշկութեան աստուածութիւն, մի ուրիշն՝ իրրե գեղագրութեան աստուածութիւն։ Նիւթական առարկաներ ևս պաշտուում են շինտօխաններից, յատկապէս զանազանատեսակ ծառեր, սրանց մէջ նշանաւոր է յատկապէս Սակակի կոչուած մշտադալար ծառը (լատիներէն *cleyera japonica*), որին իրը զոհ զանազան կերակուրներ և խմիչքներ են մատուցանում։ Այս տեսակի սրբազն ծառերը համորւում

1) P. D. Chantepie De La Saussaye: Lehrbuch der Religionsgeschichte, I 1847 էջ 82.

են բնակատեղ աստուածութիւնների և հինգ այդ պատճառով էլ պաշտում են նրանք: Եթեա կրօնի մէջ չե բացակայում նաև անտուանների պաշտամունքը: Այսպէս օրինակ աքաղաղը համարւում է արեգակի աստուածու հռն նուիրեալ ալուեսը երկրի և սնունդի աստուածու հռւ սըր բազմն կինդաննին է, իսկ մեծ—մուկը՝ հարստութեան սըրբազն կինդաննին: այսպէս նաև որոշ ձիեր, շներ և օձեր համարւում են սրբազնն Այս բոլոր աստուածութիւններից զատ կան նաև աշազին թռով ուրիշ աստուածութիւններ, սակայն աւելի փոքր և սահմանափակ զօրութեան տեր, այսպիսի աստուածութիւնների թիւը համար է 800 ըիւրի (Այս բոլոր զօրութիւնները ճապոնացւոց կրդմից ընդհանուր անունով կոչւում են կամի, որ նշանակում է «վերին», այսինքն աստուածութիւն, զօրութիւն: Ճապանացիք էլ իրենց այդ ազգային կրօնը անուանում են Եթեա կամ թէ Կամի նո Միխի, որ նշանակում է ճանապարհ Կամի:

Այս կրօնի հիմնական առրերն են ուրեմն բնութեան, նախնեաց և հերոսների պաշտամունքները, որոնք սկզբնապէս իրարից անկախ գոյութիւն են ունեցել:

Մի քանի խօսք էլ Եթեա կրօնի կուլտի մասին: Կարեւրագոյն կրօնական տօներն ընկնում են նոր տարուայ հանդիսաւ որութիւնների հետ միաժամանակ, յունուարի 1—3, փետրուարի 4-ին հունձի համար մազթանք, յունիսի 15-ին կայսերական տան և նրա հետ կապուած աստուածութիւնների տօնը, սեպտեմբերի 15-ին անդրանկաց տօնը, նոյեմբերի 23-ին հունձի տօնը: Այս տօնախմբութիւնները կատարւում են ձատպոնիայի ամեն կողմերում: իսկ առանձին հանդիսաւ որութեամբ՝ Տօկիո և Կիոտո քաղաքներում: Երբե զոհի նիւթ ծառայում են—բրինձ, ձուկ, որսի միս, զարեջուր, միրգ, կանաչեղին և ջուր, նաև զգեսաներ ու ամանեղիններ: Այս բոլոր զոհերը նետում են պաշտամունքի վայրի ամենամետ գետը:

Եթեա կրօննն ունի նաև իր սպասաւորները, քուրմերի զասակարդը: Քրմութիւնը սակայն մշտական և հաստատուն պաշտօն չէ, իւրաքանչիւր քուրմ կարող է թող-

նել իր պաշտօնը երբ կամենայ: Նրանք իրաւունք ունին  
նաև ամուսնանալու: Քրմութիւնն այսանդ սովորաբար ժա-  
ռանգական է: Յայտնի մեջեաններում ծառայող քուրմերն  
համարում են իրենց նոյն տաճարի աստուածութեան ժա-  
ռանգներ: Քուրմերը կրում են յատուկ զգեստ միմիայն  
պաշտամունքի միջոցին: Քրմերից զատ զոյութիւն ունին  
նաև քրմուհիներ, որոնք սովորաբար քրմերի աղջիկներից  
են լինում: Այս քրմուհիների պարտականութիւնն է զո-  
հաբերութեան ժամանակ պարելը և քրմերին օգնելը:

Եինտօ — մեջեանների ճարտարապեսութիւնը շատ պարզ  
է, սովորաբար փայտեայ շինութիւններ և զուրկ ներքին  
զարդարանքից: Իսկ յայտնի մեջեաններն ընդհակառակը,  
օրինակ Կիոտում, Ճապոնիայի հին մայրաքաղաքում, չա-  
փազանց հարուստ են ներքուստ զարդարանքներով: Եինտօ —  
մեջեանները մեծ մասով կառուցուած են սիրուն և փար-  
թամ ծտոերի հովանու տակ, գլխաւորապէս կաղնիներով  
և մայրիներով շրջապատուած: Այսպիսի շրջապատը և  
դիրքը տալիս են մեջեաններին առանձին խորհրդաւորու-  
թիւն և հոյակապութիւն:

Բուդդայականութեան տարածուելով ճապոնիայում  
Եինտօ կրօնի հիմքերը ճշգ դարուց սկսած սկսեցին խախ-  
տուել, նոր կրօնը տւելացրեց իր աստուածութիւններին  
նաև շինտօ — աստուածութիւններ ու զբաւեց շինտօ — մե-  
ջեաններ: Բուդդայականութիւնն ազդեց ճապոնացիների  
վրայ և բազմաթիւ հետեւողներ ունեցաւ նրանցից գլխաւո-  
րապէս իր հոյակապ ու փառաշեղ մեջեանների, հարուստ  
տօնների և սովորութիւնների միջոցով: Այսպէս, շինտօ ճա-  
պոնացիների ազգային կրօնը անկումի էր զատապարտուած:  
Սակայն 18-րդ դարի սկզբում սկսուեց այդ կրօնի վերա-  
ծնութիւնը: Աշխատում էին այդ ազգային կրօնը զատել,  
անջատել բուդդայականութիւնից, և իր նախնական կերպա-  
րանքով իրեւ ճապոնայի հարազատ և ճշմարիտ կրօնը հրա-  
տարակել ժողովրդի մէջ: Եւ այսպիսով շինտօ կրօնը ճապո-  
նիայում հոչակուեց իրեւ պետական կրօն և որ է մինչե-  
օք: Այսպիսով այդ երկրում կրօնն ու պետութիւնը կա-

պուած են ամենատամուր կապերով։ Բայց աւելի ծիշա՝ կրօնը հանդիսանում է ձապոնիայում իրեւ աղախին պետութեան և կայսերական տան ձեռքին միջոց իր քաղաքական նպատակների համար գործադրելու։ Ծիշտ այնպէս, ինչպէս որ է կրօնը որոշ քրիստոնեայ պետութիւնների մէջ։ Եինտօ կրօնի բարձրագոյն պատուէրն է—հպատակիր Միկաղօյին։ Բնականարար այս կրօնին են պատկանում պաշտօնապէս մ.ծ մասը պաշտօնական անձերից, զինուորականներից և այսպէս կոչուած բարձր դաստկարգից։ Բայց և այնպէս չնայելով որ Եինտօ կրօնը ձապոնիայի պաշտօնական, պետական կրօնն է, այդ չե նշանակում, որ նաև ժողովրդի ընդհանրութեան կրօնն է։

Բուգդայականութիւնը շատ աւելի է տարածուած ձապոնիայում և աւելի անուանի է։ Եւ այս բնական է, քանի որ ըստ Տիելէի, կրօնների գիտութեան յայտնի հետախուզի «Եինտօն չէ կարող կրօն կոչուել ներկայ մտքով։ Նա է լոկ պաշտամունք ազգային վեհապետի և կայորի։ Արօնական զգացումն զրանով ամեննեին յագուրդ չէ ստանում»<sup>1)</sup>

Ինչպէս որ Եինտօն ձապոնիայի ամենահին կէ օնն է, այնպէս և ըստդիայականութիւնն այդ երկրի ամենատարածուած և ամենաազգեցիկ կրօնն է։ Բուգդայականութիւնն ոչ թէ սկզբնական, այլ չինական կերպարանքով—մուաք գործեց ձապոնիա Կորէայի վրայով 6-րդ դարում Ք. յ. Առանձին բուգդայական մեջեանը ձապոնական հողի վրայ կառուցուեց 584 թ. Ք. յ. Բուգդայականութիւնը կարծ ժամանակի ընթացքում կարողացաւ բաղմանիւ հետեղներ զրաւել, նոյնիսկ կայսերական տան անդամններից։ Յեաադայ ժամանակի Միկաղօնների—շինտո—տոտուածուհու, արեգակի ժառանդներ—մեծամանութիւնը բուգդայական կրօնին կին պատկանում։ Այդ ժամանակից սկսած աւելի քան հազար տարի շարունակ այդ կրօնն էր ամենատարածուածը և ժողովրդականը ձապոնիայում, թէև Եինտօ կրօնը ամեննեին

1) Tiele's Kompendium der Religionsgeschichte, Breslau 1903  
էջ. 61.

արմատախիլ չեղաւ։ Յատ հոյակասպ բուդրայական մեջեանն ներ, որոնք այսօր էլ ձապոնիայի ճարտարապետական գեղեցկութիւնն են ներկայացնում, այդ շրջանի արդիւնք են Մինչև 8-րդ դար Կորեայից և Չինաստանից էին դալիս կրօնաւորներ ձապոնիա։ այնուհետեւ սակայն ճապոնական կրօնաւորներն իրենք էին Չինաստան զնում Բուդդայի վարդապետութիւնը բուն աղբիւրից ուսանելու։ Այս կրօնաւորներն իրենց հետ ձագոնիա էին բերում ոչ միայն բուդդայական կրօնը, այլ և չինական քաղաքակրթութիւնը և գրականութիւնը։ Այսօր էլ ճապոնական գրական լեզուի 5/4 չ'ն որ! է։

Սակայն ճապոնիայի ընդունած բուդդայականութիւնը չ'ը և չ' մաքուր նախնական բուդդայականութիւնը։ Այս կրօնն աւելի քան հաշտը տարուաց անցեալ ուներ, երբ նամաւք դործեց ձապոնիան այլ և՛ Չինաստանից, որակղ նամիանգամայն այլ կերպարանք էր սասցել և բազմութիւ հերձուածների բաժանուել ձապոնիայում էլ շարունակուեց այդ կրօնի կերպարանափոխութեան պրօցեսուր։

Ինչպէս յայտնի է՝ բուդդայականութիւնը ծաղեց և Հնդկաստանում 6-րդ դարում Ք. աւ Նրա հիմնազիւնն էր արքայազն Բառուամա։ Աշխարհազուարթ և անհոգ կեանք վարելուց յետոյ որոնում է նա անապատական կեանքի մշճգնաւորների ձեռքի տակ, խազողութիւն և փրկութիւն վերջապէս հասաւ նրա համար ժամը հոգեկան պայծառութեան։ Եւ նա եկաւ այն օմբուզութեան, թէ ամեն վշտի պատճառը եւալոյ ցանկութիւնն է։ Փրկութեան համանելու համար միտի Շմարիտ Ճանապարհն է սպանումը բոլորատեսակ ցանկութիւնների և հոգսերին Ճնշումն ինքնամուլութեան։ Մարդուս վերջնական նպատակը, նրա փրկութիւնը պիտի լինի դառնալն առ «Նիրվանայ», այսինքն հանգչում, ոչնչացում, որ է «Երջանիկ ոչնչութիւն»։ Փրկութեան այս վիճակը կարելի է ջանալով ձեռք բերել նաև այս կեանքի միջոցին։ Բուդդայական կրօնն անաստածային է, զուրկ է Աստուծու գաղափարից միայն այն տեսակետից, որ աստուծներն էլ խկազեա զրկուած են իրենց աստուծաւ

յին էութիւնից, նրանք էլ ենթարկւում են հոդեփոխութեան, մարդու կամ անասունի կ'ըպարանըով վերստին ծնւում են: Այսպիսով էլ հաւատն առ աստուածութիւն էական չէ բուդդայական կրօնի մէջ:

Սակայն ոչ Զինաստանում, ոչ Ճապոնիայում և ոչ իսկ Հնդկաստանում մնացել է այդ կրօնը իր վերոյիշեալ նախական փիլիսոփայական գաղափարին հաւատարիմ պահուած: Բուդդայական բոլոր մեհեաններում ահազին նշանակութիւն ունին այժմ պաշառող կուռքերը և Բուդդայի սլատիերները: Գրիֆֆի «Religions of Japan», աշխատութիւնը ներկայացնում է իրեւ ճապոնական բուդդայականութեան էութիւն՝ աթեիզմ և հաւատ հոգեփոխութեան: Բուդդայական կրօնի արտաքին կողմը բաւական նմանութիւն ունի կաթոլիկ եկեղեցու համապատասխան կողմին: Երբ եղուխտ Փրանց Քսափեր Ճապոնիայի առաջին քրիստոնեայ միհոսիօնարը 1549 թուին ստք կոխեց Ճապոնիա, նա մնաց ապշած կաթոլիկ եկեղեցու գանգերը, կրօնաւորութիւնը, արարողութիւններն այնաեղ էլ գանելով: Նա մտածեց, թէ անպատճառ սատանան չար ողին է այդ նմանողութիւնը զլուխ բերել:

Բուդդայականութիւնն աւելի հետեւողներ և աղղեցութիւն ունի Ճապոնիայում, քան որևէ և ուրիշ կրօն: Զեմբերելէնի Handbook of Things Japanese—ում կարդում ենք: «Դարեր շարունակ կրթութիւնը Ճապոնիայում բուդդայականների ձեռքին էր, Բուդդայի կրօնն էր, որ Ճապոնիա մոցրեց գեղարուեատ և բժշկութեան դիտութիւն: առաջացրեց զրամատիկ բանաստեղծութիւն, ազգեց մեծապէս քաղաքականութեան, սօցիալական և զիտական զործունեւթեան վրայ: Մէկ խոռոքով՝ բուդդայականութիւնը հանդիսացաւ Ճապոնացիների համար իրրեւ վարժապետ, որի ձեռքի տակ աճեց այդ ժողովուրդը»:

Չնայելով որ այժմ Ճապոնիայում նինտօ կրօնն է իրեւ պետական ճանաչուած և արտօնեալ բայց և այնպէս բուդդայականութիւնը պահպանում է իր ոյժը նա շատ խորն է թափանցել Ճապոնական ժողովրդի հոգու մէջ:

Բուդդայական մեհեանների թիւը խիստ մեծ է Ճապո-

նիսյում, որոնք և կառաւցուած են հոյակապ և շքեղ ձարագրապետութեամբ։ Այդ մեջեաններն եւ յաճախ գտնւում են հոյակապ, հին ծառերի տակ, այդպիսով ստանալով աւելի խորհրդաւոր լուրջ և հանդիսաւոր տեսք։ Զանազան կենդանիներից օձերի և վիշապների ձուլուածքներ զարդարում են մեչեանների արտաքինը, մուտքը պահպանում են քարից շինած ահաղին, վայրենատես առիւծներ։ Ներքին կողմից էլ զարդարուած են մեչեաններն ըստ պատշաճի, զանազան ձուլուածքներով և պատկերներով, մանաւանդ նուղգոյի պատկերներով։

Մեսերն ու արարողութիւնները կատարւում են քրմլրի ձեռքով։ Բուդդայական քուրմլրին արդելուած է, ամուսնանալը, նրանք սպարտաւոր են նաև միշտ ածիկած պահելիքնց զլուխը։ Մեծամասնութիւնը նրանցից աղետ է և անբարոյական, թէ նինտօի և թէ այս քուրմլրը ընդհանրապէս չեն վայելում յարդանք։

Կոնֆուցիոսի վարդապետութիւնն իր նշանակութեամբ և հնութեամբ բանում է, Յ-բդ տեղը հապօնիայի կրօնների թւում։ Կոնֆուցիոս (Կօնդ - ծէ, նշ. վարպետ Կօնդ), Զինաստանի այդ ամենամեծ որդին, լինքը նոր կրօն հիմնելու ամեննեին ցանկութիւնն չուներ, այլ իրեն կոչուած է, թ համարում հնութեան ուսումը և սովորութիւնները պահպանելու։ «Կոնֆուցիոս չէր կրօնի Հիմնադիր և ոչ էլ ուժափօրմատօր՝ բառի խակական նշանակութեամբ»<sup>1)</sup>։ Կրօնական ինդիրների և զարդարաքնների մասին նաև շատ քիչ բան է տաել։ Նա յարդել է, կրօնը և մ.ծ նշանակութիւնն տուել նրան՝ իրրե պետութեան հասարակութեան պահպանող կարեռը միջոցի։ Եւ այս օրատձառով էլ նա վարդապետում էր յատկապէս գործնական կեանքից, բարոյագիտութեան և քաղաքականութեան սահմաններում, սկսած իր 22 ամեայ հառակից (Ճնուած ականաւոր ընտանիքից 551թ. Ք. ա. վախճ. 478թ.): Կոնֆուցիոսի ոյժը, առում է, 8իւ, նոյնն իր լինչ որ չինական ոզու առանձնայակութիւնն է կազ-

1) Tiele Kompendiuom der Religionsgeschichte էջ 48.

մում՝ — նրա արտաքոյ կարգի սուր քարոզութիւնը մարդ հանաչելու և նրա՝ անցած ժամանակների համար տածած անհուն պահպանողութիւնը։ Եւ նա իր վրայ առաւ ոչ թէ նորոգչի, այլ աւանդտպահի տիտղոսը<sup>1)</sup>։

Կանքուցիսի բարօյադիտութիւնը բաղկանում է «Հինգ յարարերութիւններից»։ Յարարերութիւն տիրոջ և ծառայի մէջ յարարերութիւն հօր և որդու մարդ ու կնոջ, աւագ և կրտսեր եղբայրների, բորեկամ — բարեկամի մէջ։

Դէպի իշխանն ու պետն ունեցած պարտաւորութիւնը բռնում է առանձին տեղը։ Ամեն ինչ զոհելու պատրաստ պէտք է լինել այդ պարտիքը կատարելու համար — տուն, բարեկամներ, ընտանիք ու սեփական կեանք։ Ճապոնական պատմութիւնը հարուստ է այս տեսակի պարտաւորութիւնը լիովին կատարելու համար տեղի ունեցած արտաքոյ կարգի օրինակներով։ Չին — ճապոնական և արդի առևս — ճապոնական պատերազմներն անպակաս չեն նման սխրագործութիւններով։ Երկրորդ յարարերութիւնն է հօր և որդու կամ ծնողների ու զաւակների մէջ։ Արեւմուտքցի մարդու համար ամուսինների մէջ եղած յարարերութիւնը բռնում է առաջին տեղը բոլոր պարտաւորութիւնների մէջ։ այն ինչ արեւելցու, մանաւանդ ճապոնացինների մէջ, առաջին տեղը օջախի մէջ բռնում է ինքն ընտանիքը, սերունդ և ժառանգներ առաջացնելու զգացումը։ Ծնողները տածում են սեր գէպի իրենց զաւակները, իսկ զաւակները՝ պատկառանը դէպի ծնողները։ Ինչպէս ընդհանրապէս արեւելիան ժողովրդների մէջ, այնպէս և հին — ճապոնիայում ընտանիքի հայրը բացարձակ իշխող էր և աւր՝ ընտանիքի անդամների կեանքի և մահուան։ Ներկայիս ճապոնիայում, ի հարկէ, այլ ևս այսպէս չե։

Ամուսինների յարարերութիւնն է տիրոջ և աղախնի յարարերութիւն։ Կինը պարտաւոր է ծառայել տղամարդին և ընտանիքին, բայց զլխաւորապէս՝ զաւակներ բերել մարդու համար։ Մայր դառնայ՝ կը յարդուի ճապոնացի կինը,

1) Կոյն տեղ, էջ 48.

ահսերունդ մնայ՝ կատուի: Կինը իրաւունք չունի խանգառ լինելու. նա պարագաւոր է լսելեայն համբերել երբ նա աեսնում է, որ իր ամուսինը նաև հարձեր է պահում տանը: Ամուսնալուծութիւններն ել այդ պատճառով սովորական են: Վիճակագրութիւնը ցոյց է առջիս որ ամուսնալուծութիւնների թիւը համում է մատուորապէս ամուսնական կազերի  $\frac{1}{5}$  ին:

Վերջին ժամանակներս աւելի խատաշել է ամուսնալուծեան օրէնքն: Կրտսեր եղբայրներն ու քոյրերը պարտաւոր են հնազանգուել և ծառայել անդրանիկ եղբօրը նոյն իսկ մայրը պարտաւոր է այսպէս վարուել պատճառ՝ որովհետեւ անդրանիկ եղբայրն է, որ պիտի հանդիսանայ ընտանիքի շարունակող: Բարեկանների մէջ եղած յարաբերութեան մասին առանձին բան չկայ ասելու:

Կոնֆուցիոսի վարդապետութիւնն այն տեսակէտից է մեծ ազգեցութիւն ունեցել ձապոնիայում, որ սրա սօցիալական և բարոյական կեանքը յիշած «չինդ յարաբերութիւնների» վրայ է հանդչում: Աչ նինոս և ոչ Յուդիայի կրօնն ունին պահանջուած բարոյական ուսումը, և այս պակաւը լրացնում է ձապոնիայում Կոնֆուցիոսի վարդապետութիւնը: Սակայն սրա ազգեցութիւնը ձապոնիայում ոչնչանալու վրայ է շնորհիւ արեմուան կուլտուրայի: Կոնֆուցիոսի մեծ և միակ մեհեանը Տօկիում դարձած է այժմ թանգարան (Տուղեում):

Կոնֆուցիոսի վարդապետութիւնն անցեալում էլ շատ մեծ թուով հետեւողներ չեւ ունեցել ձապոնիայում, և ոչ էլ նա իր միանգամայն նախնական վիճակի մէջ մնացել:

Ցիշած երեք կրօնները, — նինոս, բուդդայականութիւն և Կոնֆուցիոսի վարդապետութիւնը ձուլուել են միանգամայն ձապոնական ժողովրդի կեանքում: Սրա օրէնքները բարոյագիտութիւնը, սովորութիւններն ու գործողութիւնները հիմնուած են միշած երեք կուլտերի վրայ. և այս նոյն իսկ ներկայումս չնայելով ձապոնիայի քաղաքական կեանքի յեղաշրջումին:

Տենրիկօ կրօնը ամենանորագոյնն է ձապոնական կրօն-

ների թւում։ Այդ կրօնը տարածուած է աւելի ժողովը ըստ ստորին խաւերի մէջ, սակայն նրա աճումն զգալի է։ Այդ կրօնի հետեւողների թիւն այժմ հաշւում են մինչև 5 միլիոն։ Նա էլ արդէն պետութեան կողմից ճանաչուած է իրեւ մէկը միւս կրօնների թուում։ Մի գեղջկուհի, Օմիկի անունով՝ Հիմնեց Տենրիկոն 19-րդ դարի քառասնական թուականներին։ Նա յաճախ ունենում էր էքստազ և աստուածների ներկայութեան երեոյթ։ Նա հոչակեց արեգակն ու լուսինն իրեւ իսկական աստուածներ։ Աստուածների վերաբերմունքը դէպի մարդիկ նման է ծնողների յարաբերութեան դէպի իրենց զաւակները։ Կայսրը հանդիսանում է իրեւ անդրանիկ եղբայր ընտանիքի, ներկայացուցիչ ծնողաստուածների՝ երկրիս վրայ։

Տենրիկո կրօնն ուսուցանում է, թէ ամեն վշտի պատճառն անմաքուր սիրան է, պէտք է ուրեմն նախ մաքրել սիրուը։ Ազօթք և ծէս անօգուտ կանցնին, մինչ մարդու սիրալ չէ սրբուած։ Այսպիսով ուրեմն, տեսնում ենք, Տենրիկո կրօնը համեմատաբար աւելի մեծ բարոյական սկըզբունքների քարոզող է։ Իրականութիւնն էլ ցոյց է տալիս, որ այդ կրօնի հետեւողներն ան համեմատ աւելի բարոյական անձեր են քան միւս հեթանսական կրօնների հետեւողները։ Արանիք սովորութիւն ունին նմանապէս պարբերաբար հաւաքուելու միասին և համայնական պաշտամունք կատարելու, այն ինչ բուգդայականները հաղիւ 3—4 անգամ տարեկան, իսկ շնոտօխանները նոյնիսկ աւելի սակաւ անգամ հաւաքում են այդ նպատակով։ Տենրիկո կրօնի յատկանիշ կողմն է, որ նա անհամբերող է մնացած կրօնների հանդէպ, միայն իրեն է ճշմարիտ համարում։ մինչ միւսները համրերատար են միմեանց հանդէպ։

Յայտնի ճանապարհորդ Մարկո Պոլո, առաջին եւրոպացին, որ ոտք զրեց շինական հողի վրայ, պատմում է, որ նա Զինաստանում լսել է դէպի արևելք գանուող մի տէրութեան մասին, կղզու վրայ, Յիպենզու անունով։ Սակայն առաջին անգամ պորտուգալացի Մենզեց Պինդօն էր, որ 1542 թուին իրեւ առաջին եւրոպացի ոտք կոխեց Ճապոնիա։

Դրան հետևեցին եզուխտներ այնաեղ իրենց հասկացած քրիստոնէութիւնը քարոզելու, դրանց առաջնորդն ու պարագլուխն էր յայտնի Ֆամիլի, եզուխտեան միաբանութեան հիմնագիր յայտնի Նոյօլայի աշակերտը, Եղուխտներն սկզբում մեծ յաջողութիւն ունեցան ձապոնիայում և կարողացան կարծ ժամանակի ընթացքում մեծ աղջեցութիւն ձեռք բերել Ասկոյն այդ յաջողութիւնը երկար չուեց. 1638 թուականին սկսուեց ու էակցիանց հալածանքը քրիստոնէութեան դէմ: Հաղարաւոր քրիստոնեայ դարձած ձապոնացիներ սրախողիսող եղանց միսիոնարներն էլ արտաքսուեցին երկրից արգելուեց միանդամայն օտարներին մօւտք գործել ձապոնիա: Հաղիւ մէկ էլ 19-րորդ դարի կէսերին աեղի ունեցաւ առեւտրական դաշինք ձապոնիոյի և Հիւս Ամերիկայի միացեալ նահանգների մէջ որով և օտարները կրկին մաւոք ունենալ կարողացան ձապոնիա: 1867 - 68-ին աեղի ունեցաւ ձապոնիայի համար նշանաւորագոյն և պատմական ահագին նշանակութիւնը որն և եղաւ առիթ ձապոնիայի դռներն արևմտեան կուլտուրայի առջև բայ անելու: 1889 թուականին ձագանիան հայտարակուեց իրը ստհմանադրական միավետութիւն, օրինակելով ճշգրիտ գերմանական յատկապէս պրուսական պետական կազմակերպութիւն: Գերմանացիներն իսկապէս ձապոնացիների փարժապեաներն են, այդ պատճառով էլ ձապոնիայի բոլոր գիմնազիօներում զերծաներէնը պարտադիր և առաջնակարգ առարկայ է դարձած: Ձապոնիայի ուսանողներն էլ առանձին սիրով գերմանական համալսարաններ են յաճախում: 1873 թուականից կրկին հրատարակուեց ձապոնիայում կրօնական համբերատարութիւն: 1875-ին հիմնեց ձապոնիայի քրիստոնեայ Հիշիման, որը սովորաբար «առաքեալ ձապոնիայի» է, կոչում առաջին քրիստոնէական բարձրագոյն գպրոցը ձապոնիայում: Հիմնուեցին աղքատանոցներ, որբանացներ և այլ բազմատեսակ բարեգործական հաստատութիւններ: Այնպէս որ այդ շրջանում քրիստոնեայ դառնալը ձապոնիայում մօղայ էր դարձած: Այս հոսանքը պաշտպանում էր մանաւանդ երկրի


աղաւամիտ տարրի կողմից, աւելի քաղաքական շարժառիթ-ներից զբգուածք, քան կրօնական համոզմունքից։ Սակայն այս շրջանը երկար չտևեց։ Այդ միջոցին զարգացաւ և նոր կերպարանք ստացաւ ճապոնացիների աղքային ու ցեղական ինքնաղիստակցութիւնը, որը ձգտում էր աղքային միութեան և ինքնուրոյնութեան, այդ պատճառով էլ՝ ընդդիմութիւն՝ այդ միութիւնը բաժանող կրօնների դեմ։ Ատելութիւնը զեպի քրատոնեաները զարգացաւ ճապոնիայում մտնաւանդ 1895-ից, չն ճապոնական պատերազմից յետոյ։ Յայտնի է, որ ճապոնիան չկարողացաւ իր փառաւոր յաղթութեան պառակը վայելել և այդ շնորհիւ Արևելքի եռապեական դաշնակցութեան—ռուսիայի, գերմանիայի և ֆրանսիայի ճապոնիայի ձեռքից խլուեց նրա յաղթական աւարը՝ Կիառառանգ թերակղզին Պօրտ Արտուրով հանդերձ։

Բայց և այնպէս ներկայումս ճապոնացիները, նաև կառավարութիւնը, համբերող են քրիստոնէական միսարժնի հանդէպ։ Ճապոնիոյում զործում են այժմ երեք դաւանութեան միսարժնարներ՝ կաթոլիկ, օրթոդոքս, և բողոքական, բողոքական միսարժնի ներկայացուցիչները մեծ մասով ամերիկայիներ են, իսկ օրթոդոքս եկեղեցունը՝ ռուսներ։

Խոյոր քրիստոնեաների թիւն այժմ հասնում է մոտ 130,000, որոնցից 55,824 հոգի հոռմէական կաթոլիկ, 46,634 հոգի բողոքական և 26,680 հոգի օրթոդոքս, բայց այս թուից նաև շատ երեխաներ, որոնք հաշուի չեն առնուած։ Միմիայն Տօկիոյի քրիստոնեաների թիւը հասնում է 15,000-ի։ Նատ քրիստոնեաներ անուանի պաշտօնների ակը են, նոյնիսկ մինիստրներ, օֆիցիեներ, 12 հոգի էլ պարլամենտի անդամներ, բայց ամենից առաջ՝ ուսանողներ և վարէսպեաներ։ Տօկիոյի երեք մեծ օրաթերթերի և շաո բորեգործական հաստառութիւնների ղեկավարները քրիստոնեոյ մարդիկ են։ Ճապոնացիները սովորեցին քրիստոնեան բարոյական սկզբունքները, որոնք և այժմ ճապոնիայում, նոյնիսկ ոչ քրիստոնեայ խառերում իշխաղ դեր են խաղում։ Ճապոնացիները սովորեցին քրիստոնեաներից, որ միակնութիւնը, և ոչ բազմականութիւնը, հիմք է

ընտանեկան և ժողովրդական երջանկութեան Տօկիոյում  
յայսնի է յատկապէս ճապոնացի քրիստոնեայ և գործիչ  
կանզո Աւշիմուրա, որ վերջերս հրատարակեց գերմանե-  
րէն լեզուով մի «գբբոյկ» Wie ieh ein Christ wurde. (Ֆնչ-  
պէս զարձայ ես քրիստոնեայ), որտեղ նա իր զարձի և նոր  
կեանքի պատմութիւնն է անում: Իրը զիւզատնատեսկան  
բարձրագոյն զպրոցի ուսանող, «գեռ ֆուքս», նա ազգուելով  
իր ընկերների հետ իրենց՝ ընապիտութեան ամերիկացի  
պրօֆեսորից, ընդունում են քրիստոնէութիւն: Աւշիմու-  
րան հրատարակում է այժմ Տօկիոյում մի կրօնական հան-  
դէս «Ս. Գրոց ուսմունք» վերնագրով, ընտրելով իր համար  
«pro Christo et patria» նշանաբանը: Երբ ներկայ ուռւա-  
պոնական պատերազմը բռնկուելու վրայ էր, նա եր որ ու-  
րիշ քչերի հետ հրապարակապէս զիմադրեց պատերազմի  
ծրագրին: Բայց ճապոնացիների ծայրայեղ հայրենասիրու-  
թիւնը լուեցրեց նրա և նրա նմանների ձայնը:

**Արտաքս Աքեղեան.**



## ՃԱՊՈՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

«Մոռո» (Русъ) թերթի № 93 ում «Նապօնական երեկոյթ-ներ» վերնագրով յօդուածում կարդում ենք հետեւեալը, —

Նարաթական երկու անդամ ինձ մօտ դալիս են ճապօնացիներից երկու հոգի: Գրասեղանու ամենաճոխ կերպարանք է ստանում՝ լցուում է ճապօնական օրագիրներով, դոյնզդոյն կազմ ունեցող ամսագիրներով, նկարներով և պատկերներով:

Յապասաւորներս դժգոհ են, որ ես ընդունում եմ մեր թշնամիներին: Բայց երբ ես պատմեցի այն որտաշարժ պատմութիւնը՝ թէ ինչպէս Սարտարին պրաւուլաւ հաւատ ընդունեց և ամուսնացաւ ուռս օրիորդի հետ, խոհարարուհիս բա-  
ցականչեց:

— Այ ձեզ գլխից ձեռք քաշածը: